

# Լեզվաբանություն և բանասիրություն

## Սիրարփի Դավթյան

*Եվրասիա միջազգային համալսարանի վարժարանի փոխպնօրեն,  
ՀՊՄՀ հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ*

## ԼԵՎՈՆ ՎԱՐԴԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Սույն հոդվածը գալիս է ցույց տալու, որ Լևոն Վարդանը մեկն է այն սփյուռքահայ գրողներից, ով իր ստեղծագործական ճակատագրով նվիրված էր բացահայտելու հայի ով լինելը, նրա դերը պատմության և հասարակության մեջ, ևս մեկ անգամ աշխարհասփյուռ դարձնելու այն փաստերը, որ, այո՛, իսկապես եղել է 1915-ը, որ, այո՛, հայը տանջվել է, բայց երբեք չի ծնկել: Լևոն Վարդանը մեզ ժառանգություն է թողել բանաստեղծություններ, թարգմանություններ, բառարաններ, հուշագրություններ, ժամանակագրություններ, նամակներ և տարբեր ուսումնասիրություններ: Իր գործերով նա բացահայտեց արևմտահայի առօրյան, նրա տնտեսական կյանքը և ընդհանրապես՝ արևմտահային 1915-ից առաջ և 1915-ից հետո:

**Հիմնաբառեր.** ժամանակագրություն, 1915, արևմտահայ, փաստ, պատգամ, բարերար, պատմաբան, գրականություն, արևմտահայերեն, բանաստեղծություն, բառարան:

Բազմաժանր է Լևոն Վարդան գրողը. ունի չափածո, արձակ, գրականագիտական, պատմագիտական գործեր: Այսօր մեծ գրողի ողջ գրական ժառանգությունը, որոնց մեջ կան նաև անտիպ գործեր, թարգմանություններ, ընտանիքը նվիրաբերել է Եվրասիա միջազգային համալսարանի գրադարանին: Այդ գործերը կարող են հետաքրքրել ինչպես բանասերներին, գրականագետներին, պատմաբաններին, այնպես էլ՝ իրավաբաններին, տնտեսագետներին, ցեղասպանագետներին և արաբագետներին:

Մեր ուսումնասիրության սեղանին ենք դրել նրա հազարավոր գործերից մի քանիսը:

Չափածո գործերից առանձնացրել ենք «Վարուժնագիրը», որը հեղինակը ձոնել է միակ որդուն՝ Վարուժանին, և բոլոր բանաստեղծությունները նվիրված են նրան: Ժողովածուն հրատարակել է Ծովիկ Կետիկյանը՝ գրողի քրոջ դուստրը: Գիրքը բացվում է «Աղւոր տղաս...» բանաստեղծությամբ, իսկ մյուս բանաստեղծություններն անվերնագիր են: Արևմտահայ գրող Անդրանիկ Սարյանը գրել է. «Իր «Վարուժնագիրը» պոեմաշունչ ստեղծագործությունը այնքան հեզասահ եւ հարազատ ու անմիջական, այնքան՝ թե՛ ծնողաշունչ եւ թե՛ պատգամաշունչ, որ թուով է, թե՛ ինչոր հանճարեղ երաժշտագետ է հյուսել այն, որպէս սիմֆոնիա և պարգետել աշխարհ»

հին: Մի անօրինակ զլուխգործոց ստեղծագործություն, որի չափանիշով գործ, ես միտ չեմ բերում տեսած լինեմ մեր գրականության մեջ: Մի պահ ականջ պահենք իր քնարին:

...Ջեղո՛ւն, վարա՛ր, հոգեշունչ, որը մէկ չէ, հարիւր անգամով էլ մարդ չէր կշտանում կարդալով...»

Արևմտահայ հրապարակախոս Արմեն Հարությունյանը գրել է. «Օդանավին մէջ քանիցս կարդացի իր հնչեականերէն միայն վերջին համարը, որ սապէս կընթանայ.

«Ու երբ կարդաս՝ բայց գտնես, որ բացակայ եմ արդեն,  
Ու չկամ այս կեանքէն ներս՝ գիտցիր, տղաս, որ հոգիս  
Պիտի խայտայ լսելով զանոնք շուրթիդ վրայէն»:

Կը հավատամ, որ սա անելի խոր է քան «Խօսք իմ Որդունը», եւ պիտի դիմանայ տարիներու հոլովոյթին, այնքան ատեն, որ հայերէն կարդացողներ պիտի գտնուին...

Ասիկա լաւագոյն պատգամն է մեր հին եւ նոր սերունդին»:

1997 թվականին Լևոն Վարդանի 70 ամյակի առիթով Բեյրութում տպագրվեց նրա «Հին, հին բաներ» գիրքը: Ինչպես ինքը՝ հեղինակն էր ասում, սա հատոր չէ պատմվածքի և պատումի կամ հավաքածու հուշերի և հուշագրության: Այն սուտի գեղեցկության, գեղեցիկի դրսևորումի, իմացական դրույթների և արվեստի արտահայտչականության արտահայտություն չէ: Ինչ փույթ, որ այստեղ կարելի է գտնել այս բոլորի տարրերը և մանավանդ՝ կյանքի և առօրյայի փշրանքներ: Բզկտված, կոտորակված, արյունային բան է թևածում այս առօրյայից ներս, ուր, սակայն, կա նաև հույսի և գեղեցկության, դրականի և հավատքի, հայի գոյության և լինելիության ամբողջացում: Այս գրքի հերոսները կային երեկ, ապրեցին կյանքն այնպես, ինչպես որ վիճակված էր նրանց համար: Հեղինակն իրեն համարում էր պարզապես միջնորդ գրքի հերոսների և այսօրվա միջև, և շարունակում է տևել որպես ապրող և գոյատևող վկա մի անցյալի, որը գեղեցիկ չէր բնավ, և երեկի, որին մերթ կնայի կարոտով, սակայն այսօր այս գրքի միջոցով սպասում է իր բոլոր՝ մեծ ու փոքր, հին ու նոր ընթերցողների դատին ու դատաստանին, որոնք կարող են լինել հայության կյանքի ուսումնասիրությանը նվիրված անհատ և որոնց հայ գիրն ու մշակույթը, պատմությունն ու գիտական ուղեղը կարող են տված լինել որոշ բնորոշում և ստորոգում, անուն ու վերադիր:

Իսկ ահա 1999 թվականին Բեյրութում թորոնթոյաբնակ ազգային բարերարներ Հակոբ և Ծովիկ Կետիկյանների մեկենասությամբ տպագրվում է «Մարդեր ճամբու մայթերէն» գիրքը: Սակայն հեղինակին չհաջողվեց վերջնականորեն սրբագրել այս գիրքը: Միայն առաջին 33 էջերը կարողացավ վերանայել: Գիրքն իր մեջ ամփոփում է հուշեր Սիմոն Սիմոնյանի, Անդրանիկ Ծառուկյանի, Պարույր Սևակի, Սարուխանի, Շիրազի, Կոստան Զարյանի և այլոց մասին: Հեղինակը գրում է.

«Այս գիրքը կազմող էջերն ու հատուածները, որոնք հեռու, շա՛տ հեռու կը կենան գեղարուեստական դրսևորումի եւ գեղեցիկին արտայայտութենէն՝ յաճախ կը ներկայանան որպէս խտացումը որոշ պահերու, մոռացումէ փրցումաճ էջերու, առօրեան գեղեցկացնող, լիացնող եւ մերթ իմաստաւորող ապրումներու, եւ մանաւանդ՝ հին ու նոր յուշերու պատառիկներու, զրոյցի բեկորներու, հանդիպումի պահերու, եւ մտքի ու զգացումի փոխանակումաճ՝ այլ թռուցիկ վայրկյաններու... »<sup>1</sup>:

<sup>1</sup> Լ. Վարդան, Մարդեր ճամբու մայթերէն, Պէյրութ, 1999, էջ 8:

«Իրավ, ո՞վ կճանչնայ հայ արվեստագետն ու գրողը: Այս գիրքը գրողը կը հավատայ, թե ժամանակակից հայ գրողն ու արվեստագետը արժանի են ավելիին, եթե ոչ իրենց կենդանության՝ իրենց մահեն ետք գոնե»<sup>2</sup>:

Հենց այս համոզմունքն ու հավատն էին, որ մղեցին հեղինակին այս գրքի միջոցով մի քանի էջով լույս իջեցնել գրողների կյանքի, մտքի ու զգացմունքների վրա, որոնց հետ բախտ էր վիճակվել հեղինակին ծանոթ լինել: Վստահորեն այս գիրքը այսօր արտահայտություն է խորունկ սիրո և գուրգուրանքի այն բոլորի հանդեպ, որոնք կային երեկ և չկան այսօր և մանավանդ դրսևորումն այն ճիգին՝ ամբողջական մոռացում է փրկելու համար քանի մը էջ այն կյանքէն, որ եղավ անոնցը, և որ շուտով պիտի կորուսի անմիջական մութն ներս ժամանակին և հիշողության:

«Հարկերը օսմանեան և պարսկական կայսրություններուն մեջ» բառարանը ամբողջացնում է արևմտահայության և նրա հետ փոխհարաբերությունների մեջ գտնվող ժողովուրդների տնտեսական կյանքը՝ 15-20-րդ դարերում: Հեղինակը հիմնովին ներկայացնում և վեր է լուծում մի քանի 100 անուն տուրք՝ հիմնվելով օսմանյան հարկային կանոնագրքերի վրա: Լևոն Վարդանը այս մեծածավալ աշխատությանը նվիրեց իր կյանքի շուրջ 30 տարիները: Գիրքը երկհատոր է. առաջին հատորը տպագրվել է 2004 թվականին՝ Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի հրատարակության բաժնի կողմից՝ իր քրոջ՝ տիկին Մարի Պեհեսնիյանի մեկենասությամբ: Երկրորդ հատորը տպագրվել է 2012 թվականին Բեյրութում՝ մեր սիրելի, անզուգական եղբոր՝ Լևոն Վարդանի անմեռ վաստակին ընծայմամբ: Առաջին հատորն ընդգրկում է Այբ-Ինի տառերով սկսվող տուրքերը, իսկ երկրորդը՝ Լյուն- Ֆե: Երկրորդ հատորի աշխատանքների ժամանակ նա մի շարք դժվարությունների բախվեց. անընդհատ նոր սկզբնաղբյուրներ էր հայտնաբերում, երբեմն խճճվում էին մանրատառ նոթագրությունները: Այսօր ընթերցողի սեղանին են դրված երկու հսկայածավալ աշխատություններ, որոնք, համոզված ենք, հետագա բովանդակ աշխատանքների հիմք են ծառայելու:

Հետաքրքրության համար բերենք մի քանի օրինակ.

1. Միւհիրտարլըզ-Արաբերէն մուհր-կնիք, պարսկերէն տար-պաշտօն ունեցող բառերէն՝ բառացի կնիքի պահապանի վարձք, Օսմանեան կայսրութեան մէջ գանձուող վճարումներէն էր անիկա պետական գրասենեակի քարտուղարին կամ պետական կնիքը պահողին համար<sup>3</sup>:
2. Տեմիր փարասը-Թրքերէն տեմիր-երկաթ եւփարա-դրամ բառերէն: Բառացի կը նշանակէ երկաթի դրամ, սակայն Ի դարուն Օսմանեան Կայսրութեան մէջ անիկա նաւահանգիստի մէջ խարիսխ նետելու հարկն է անիկա<sup>4</sup>:
3. Հազգ ուլ գալեմ-Արաբերէն հազգ-իրաւունք եւ գալեմ-գրիչ բառերէն, ապօրինի հարկ մըն էր, որ կը գանձուեր պետական գրասենեակին,

<sup>2</sup> Լ. Վարդան, Մարդեր ճամբու մայթերէն, , Պէյրութ, 1999, էջ 11:

<sup>3</sup> Լ. Վարդան, Հարկերը օսմանեան և պարսկական կայսրություններուն մեջ, Հատոր Բ, Պէյրութ, 2012, էջ 217:

<sup>4</sup> Լ. Վարդան, Հարկերը օսմանեան և պարսկական կայսրություններուն մեջ, Հատոր Բ, Պէյրութ, 2012, էջ 294:

քարտուղարին կամ արձանագրող պաշտօնեային կողմէ ամէն անգամ, երբ կատարուէր պետական արձանագրություն մը<sup>5</sup>:

«ժամանակագրություն հայկական 15-ի» գրքում հեղինակը կատարել է ահեղի ժամանակագրական աշխատանք: Փաստերը խոսում են բացառապես թվով ու թվականով: Գիրքը գրելիս բազում դժվարությունների առաջ է կանգնել, որոնցից գլխավորը նշում է վավերագիրներին: Երբեմն հենց նույն հեղինակն իսկ նույն գրքում նույն դեպքի համար տալիս է իրարից տարբեր թվականներ, հանդիպում էին նաև տպագրական և սրբագրական անուշադրություններ: Թվականների մեջ տարբերություններ կային նաև ականատեսների տված տեղեկությունների մեջ: Գրքի մեջ ամփոփված են հրամանագրեր, տեսակցություններ, նամակներ: Նա փորձել է տալ այն բոլոր գրույցներն ու տեսակցությունները, որոնց մէկ կողմը միշտ թուրքական իշխանությունն է եղել: Անդրադարձ է կատարվել պատրիարքական այն թղթակցություններին, որոնք բացահայտում են հայ ժողովրդի առօրյայի արյունոտ իրականությունը: Գիրքը մի քանի հատված ունի: Առաջին հատվածում ներկայացնում է այն ժամանակաշրջանը, որը նախորդում է հայկական 1915ին: Ընթերցողը հասնում է մինչև 1915 թվականի հունվար: Երկրորդ հատվածով սկսվում է իսկական ժամանակագրությունը, որը հասնում է մինչև երիտթուրքերի անկումը՝ 1918 թվականի վերջը: Երրորդն ընդգրկում է 1918-1923 թթ: Իսկ վերջին հատվածով ավարտվում է վերլուծումը, որը առավելաբար հիմնված է առաջին և երկրորդ հատվածների բովանդակության վրա:

Բերենք մի քանի կարևոր փաստեր գրքից.

23 ապրիլ 1915 - Պոլսյ Հայոց Պատրիարքարանին մէջ տեղի ունեցող Խառն ժողովի խորհրդակցական հանդիպումը մանրամասնօրէն քննելէ ետք հայերու հանդէպ Երիտասարդ- Թուրք Կուսակցութեան կառավարութեան որդեգրած դիրքն ու անկէ ծագած դէպքերը՝ ընդունեց Գրիգոր Զօհրապի առաջարկը, որուն համաձայն յուշագիր մը պիտի մատուցուէր Բարձրագոյն Դուռ՝ խնդրելու համար կառավարութենէն, որ փոխէր իր դիրքն ու քաղաքականութիւնը հայերու նկատմամբ<sup>6</sup>:

24 ապրիլ 1915 - 23/24 ապրիլի գիշերը Պոլսյ եւ Օսմանեան Կայսրութեան այլ քաղաքներուն մէջ ձերբակալուեցան հայ մտաւորականները, կուսակցական ղեկավարներն ու գործիչները, կրօնական պետերը, առետրականներն ու հանրաձայնօթ եւ ազատ ասպարեզի տէր հայերը, երբ անդին՝ Չմշկածագի շրջակայ գիւղերը կը տեղահանուէին եւ ժողովուրդը կը քարոզուէր<sup>7</sup>:

29 դեկտեմբեր 1915 - Թալէաթ հրահանգեց, որ տարագրութեան ճամբաներուն վրայ հայերու անթաղ մնացած դիակները պարտկէին և վերցնէին մեջտեղէն, որովհետև նկատուած էր, որ օտար սպաներ կը լուսանկարէին զանոնք<sup>8</sup>:

Լևոն Վարդանը մեկն է այն գրողներից, ով անդրադարձավ ոչ միայն արևմտահայության առօրյային, այլև՝ տնտեսական կյանքին: Այդ անդրադարձի ծնունդը եղավ «Արևմտահայությունը տնտեսական հարաբերություններու ճամբուն

<sup>5</sup> Լ. Վարդան Հարկերը օսմանեան և պարսկական կայսրություններուն մեջ, Հատոր Բ, Պէյրութ, 2012, էջ 171:

<sup>6</sup> Լ. Վարդան, ժամանակագրութիւն հայկական տասնհինգի 1915-1923, Պէյրութ, 1975, էջ 34:

<sup>7</sup> Լ. Վարդան, ժամանակագրութիւն հայկական տասնհինգի 1915-1923, Պէյրութ, 1975, էջ 35:

<sup>8</sup> Լ. Վարդան, ժամանակագրութիւն հայկական տասնհինգի 1915-1923, Պէյրութ, 1975, էջ 66:

վրա» ուսումնասիրությունը: Գրքի առաջաբանում հեղինակը գրում է, որ 1915 թվականից հետո շատ պատմաբաններ բավարարվեցին միայն հայերի վերջին մեկ ու կես դարվա պատմության ուսումնասիրմամբ: Բայց նա չի մեղադրում նրանց, քանզի հնարավոր է համարում նաև պայմանների բացակայությունը: Այս գրքով Լևոն Վարդանը փորձում է տալ այն սովյալները, որոնք եղել են արևմտահայության առօրյայի հիմքը: Հայն իր երեկով ու ներկայով վաղուց էր, որ անցել էր պատմության հորձանուտը և վեր էր ածվել ապաքաղաքացու և խուզվող և մորթագերծվող հպատակի՝ օրինականության և կրոնականության հաստատված դրության շնորհիվ, որ դարերի ընթացքում թև ու թիկունք տված հրին ու սրին, և գրված ու անգիր բազմաթիվ սովորություններով ու ավանդություններով, հրամանագրերով ու կանոնակարգերով, հրովարտակներով ու հայտարարումներով՝ պիտի դառնար հիմնական ու անսասան վեմն ու կառույցը տնտեսական ու քաղաքական այն առօրյային, որ եղավ հայինը 16-րդ դարի կեսերից: Այս գրքով հեղինակը բացահայտեց ոչ միայն հայ – օսմանյան, այլև՝ հայ- քրդական տնտեսական հարաբերությունները: Գիրքը գրելիս օգտվել է փաստաթղթերից և մերթ էլ՝ ժամանակակից մամուլից՝ հավատալով, որ չկա պատմագրություն առանց փաստագրության: Նա վստահ էր, որ գալու է մի օր, երբ հայ պատմաբանը, ազատագրվելով իրեն կաշկանդող գաղափարաբանական և քաղաքական կապ ու կալանքից, պիտի դիմի ճշմարիտի քողագերծումին: Լևոն Վարդանը մտածում էր, որ եթե ինքն այս գրքով կարողացավ մի փոքր լուսամուտ բացել վերը մատնանշված հարաբերությունների վրա, ինքն իրեն շատ բավարարված կզգա՝ շատ լավ իմանալով, որ մի օր պիտի գտնվեն ուրիշները, որ այդ փոքր լուսամուտից պիտի փորձեն դիտել ամբողջ երեկը, որն արևմտահայության կյանքի ու կեցության պատմությունն էր, և այդ ձևով պիտի արձագանքեն այն ամենին, ինչը կտեսնեն որպես ճշմարիտ և հիմնական, անուրանալի և անհերքելի մի ժողովրդի կյանքից ներս, որն արևմտահայն է, որի մի մասնիկը հենց ինքն էր:

«Ժամանակին ընթացքին կոտորակուող ժողովուրդ մը, ինչպիսին եղաւ հայը, հազի՛վ թէ ունեցաւ ժամանակ ինքզինքն ըլլալու, հազի թէ կարողացաւ կենալ իր իսկ ոտքերուն վրայ եւ զգալ ինքզինքն ապրող ու շնչող մարդ: Արդարեւ, մարդ չէր անիկա եւ անոր կը պակսէր մարդեղութեան որեւէ հետք իր շրթներուն վրայ. ընդհակառակը, ցաւ էր երգն անոր, արիւն էր առօրեան իր, յաճախանք էր ընթացքն իր օրերուն, եւ զահանդական ապրում այն ներկան՝ որուն հորիզոններուն վրայ ծագող իւրաքանչիւր արշալոյս խոստումն էր նոր ազէտի, նորոգ ալ արհնումի»<sup>9</sup>:

<sup>9</sup> Լ. Վարդան, Արեւմտահայութիւնը տնտեսական յարաբերութիւններու ճամբուն վրայ, Պեյուք, 1998, էջ 16:

**Сирарпи Давтян**

*Заместитель директора колледжа Международного университета Евразия,  
соискатель кафедры армянского языка и методики его преподавания АГПУ*

## ТВОРЧЕСТВО ЛЕВОНА ВАРДАНА

Левон Вардан один из тех писателей армянской диаспоры, кто посвятил свою творческую судьбу выявлению личности армянина, его роли в истории и в обществе. И еще один факт, свидетельствующий о причине, сделавшей его предводителем диаспоры. Да, конечно, 1915, как все было в 1915-ом: как армян мучали, но они никогда не склоняли колен. Левон Вардан оставил нам в наследство стихотворения, переводы, словари, мемуары, летописи, письма, разные исследования. Своей деятельностью он описал будни западного армянина, его хозяйственную деятельность и, вообще, западного армянина до 1915 и после 1915 года.

**Ключевые слова:** летопись, 1915, западный армянин, факт, завет, меценат, историк, литература, западно-армянский, стихотворение, словарь.

**Sirarpi Davtyan**

*Deputy head of Eurasia International University College,  
Ph.D student of the Chair of Armenian Language and its Teaching Methods, ASPU*

## LEVON VRADAN'S WORKS

Levon Vardan was one of the Armenian Diaspora writers whose creative fate was to reveal who an Armenian was, his role in the history and society, and once more to globalize the fact that the events of 1915 really happened and the Armenians suffered a great deal, however, never knelt. Poet Levon Vardan is multi-faceted; he has verse, prose, literary studies. Levon Vardan inherited us poems, translations, dictionaries, memoirs, chronicles, letters and various studies. With his works he discovered western Armenian's daily routine, his economic life and in general the western Armenia before 1915 and after.

**Key words:** chronicle, 1915, western Armenian, fact, message, philanthropist, historical, literature, western Armenian, poetry, dictionary.